ԿԱՆԱՆՑ ՀԶՈՐԱՑՈՒՄ՝ ՀԱՆՈՒՆ ՏԵՎԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԵՐ

Տևողությունը՝ 5 ամիս

Առաջին եռօրյա դասընթաց (նախնական)՝ սեպտեմբերի 13-15

Երկրորդ եռօրյա դասընթաց (նախնական)՝ հոկտեմբերի 6-8

Մասնակիցների թիվը՝ 25

Իրականացման վայր՝ Հայաստան

Ծրագրի նկարագիր

Ծրագիրը նպատակ ունի ուժեղացնելու կանանց ձայնը, հզորացնելու նրանց կարողությունները և դրանով նպաստելու Հայաստանում կայուն խաղաղության հաստատմանը: Ծրագրի ակնկալվող ընդհանուր արդյունքը Հայաստանում խաղաղության պաշտոնական գործընթացների բոլոր մակարդակներում կանանց ներգրավվածության աճն է:

Խնդիրները

- Բարելավել կանանց և կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունների կարողությունները՝ խաղաղության գործընթացներում արդյունավետ ներգրավվելու և կանանց իրավունքները ջատագովելու համար:
- Ֆասիլիտացնել երկխոսության հնարավորությունները և քաղաքականության ջատագովությունը՝ խթանելու համագործակցությունը կին առաջնորդների միջև և մշակել գենդեր-արձագանքող տարբեր խաղաղության պոտենցիալ համաձայնագրի և բանակցությունների համար:

Ովքե՞ր կարող են դիմել

Ծրագրում կընդգրկվեն 25 մասնակից՝ 10 ՔՀԿ ներկայացուցիչ (ներառյալ՝ կանանց ոչ ֆորմալ խմբերը և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները) և 15 անհատ ակտիվիստներ:

Ի՞նչ է ակնկալվում մասնակիցներից

- Ակտիվ մասնակցություն կարողությունների զարգացման երկու եռօրյա դասընթացներին՝ նվիրված բանակցությունների, երկխոսության, հաղորդակցության և առաջնորդության հմտություններին:
- Ներգրավվածություն՝ գնահատման սեմինարին՝ գնահատելու գիտելիքների և կարողությունների զարգացման աճի մակարդակը:
- Աջակցություն երեք թեմատիկ վեբինարների կազմակերպման, մասնավորապես՝ մասնակիցների հավաքագրման գործում:
- Անդամակցություն տարբեր ոլորտների կին առաջնորդների ցանցին և ակտիվ մասնակցություն ցանցի առցանց հանդիպումներին, որի շրջանակում կկիսվեք խաղաղաշինությանն առնչվող գիտելիքով և լավագույն փորձով:
- Ներգրավվածություն առնվազն երեք տեղական ֆորումների և ազգային համաժողովի կազմակերպման աշխատանքներին՝ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությամբ գենդեր-արձագանքող քաղաքականությունների մշակումը և խաղաղության գործընթացներում կանանց ներգրավման մակարդակը խթանելու համար:

Ինչպե՞ս դիմել

Դիմելու համար անհրաժեշտ է լրացնել դիմում-հայտը հետևյալ *հղումով:*
Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է **2024 թվականի օգոստոսի 29-ը**՝ օրվա ավարտը:

Ընտրության չափանիշներ.

- **Մասնակիցների թիվը**՝ 25
- **ՔՀԿ և ոչ ֆորմալ խմբերի թիվը**՝ առնվազն 10
- **Ներառականություն.** Ծրագիրը խրախուսում է հաշմանդամություն ունեցող անձանց, էթնիկ փոքրամասնությունների և այլ խոցելի խմբերի մասնակցությունը՝ ապահովելու բազմազանություն և ներառականություն:

Առաջնահերթությունը կտրվի Արցախից տեղահանված և մարգինալացված համայնքներից դիմորդներին:

- **Տարիքային միջակայք՝** 18 տարեկանից բարձր կանայք
- **Աշխարհագրական ներկայացուցչություն.** Առավելությունը կտրվի Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերի ներկայացուցիչներին:

Ընտրված մասնակիցները պետք է պարտավորվեն մասնակցել կարողությունների զարգացման դասընթացներին և միջոցառումներին ծրագրի 5 ամիսների ընթացքում: Այս պարտավորությունն ապահովում է ծրագրի լիարժեք արդյունավետությունը և նպաստում մասնակիցների պատասխանատվության և նվիրվածության բարձրացմանը:

Հայտերի գնահատում.

Մասնակիցների ընտրությունը տեղի կունենա մինչև **2024 թվականի սեպտեմբերի 5-ը** երկու փուլով՝

- **Առաջին փուլ:** Դիմում-հայտերի գնահատման հիման վրա կընտրվեն այն դիմումատուները, որոնք կհրավիրվեն հարցազրույցի:
- **Երկրորդ փուլ:** Առաջին փուլը հաղթահարած մասնակիցների հետ կանցկացվի հարցազրույց՝ դիմումատուի փորձառությունը, շարժառիթը, ակնկնալիքներն ու կարիքները և կրթական ծրագրին համապատասխանությունը հասկանալու նպատակով:

Կդիտարկվեն միայն ընտրության չափանիշներին համապատասխանող դիմորդների դիմումները: Ուշ ուղարկված դիմումները չեն դիտարկվի:

Ընտրության երկու փուլերը հաջողությամբ անցած մասնակիցները կտեղեկացվեն ընտրության արդյունքների մասին էլեկտրոնային փոստով և կհրավիրվեն մասնակցելու ծրագրին:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել Ծրագրի պատասխանատու Անի Սարդարյանի հետ՝ զանգահարելով +37496007805 հեռախոսահամարին (երկուշաբթիից ուրբաթ՝ 09:30-17:30) կամ գրելով asardaryan@oxygenfund.am էլեկտրոնային հասցեին:

Ծրագիրը իրականացվում է ՕքսԵՋեն հիմնադրամի կողմից Նիդերլանդների բազմակուսականացման ժողովրդավարության ինստիտուտի հետ համագործակցությամբ՝

Միավորված ազգերի կազմակերպության կանանց խաղաղության և մարդասիրական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ։